ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դեկտեմբերի 2023 թվականի №-Ա

«ՔՈՆԹՈՒՐԳԼՈԲԱԼ ՀԻԴՐՈ ԿԱՍԿԱԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը և 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2023-2025 թվականների ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-6 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2023-2025 թվականների ներդրումային ծրագրի արժեքը կազմում է 6 780,2 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.
    1) պատվարների և հիդրոտեխնիկական կառուցվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրում, դրանց վերականգնման նախագծային փաստաթղթերի կազմում և կայունության ամրապնդում՝ 1 446,0 մլն դրամ,
    2) «Տաթև» հիդրոէլեկտրակայանի օրական կարգավորման ջրավազանի (ՕԿՋ) վերակառուցման նախագծային փաստաթղթերի կազմում և վերակառուցում՝ 1 056,7 մլն դրամ,

3) շրջակա միջավայրի պահպանություն, աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության ոլորտի գործառույթների բարելավում՝ 458,9 մլն դրամ,

4) «Շամբ» հիդրոէլեկտրակայանի ուժային տրանսֆորմատորների փոխարինում՝ 1 637,0 մլն դրամ,

5) չորս ջրամբարների և ՕԿՋ-ի հիմնական և օժանդակ փականների բարձրացնող մեխանիզմների ավտոմատիզացում և դրանց հեռահար կառավարում, դիֆերենցիալ պաշտպանության համակարգի ներդրում ՝ 870,1 մլն դրամ,

6) հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 1 311,5 մլն դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
դեկտեմբերի 2023թ.